Հավելված N 1
ՀՀ կառավարության 2011 թվականի
սեպտեմբերի 8-ի N 1396 - Ն որոշման

Կ Ա Ր Գ
ՀՈՂԻ ԲԵՐՐԻ ՇԵՐՏԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության տարածքում հողի բերրի շերտի (այսուհետ՝ բերրի շերտ) նպատակային և արդյունավետ օգտագործման հետ կապված հարաբերությունները:

2. Բերրի շերտի արդյունավետ օգտագործումը ներառում է նաև դրա հանումը, տեղափոխումը, պահպանումը և հաշվառումը:

3. Բերրի շերտը հողային ծածկույթի վերին շերտի բուսահողն է, որն օգտագործվում է հողերի բարելավման, կանաչապատման, ռեկուլտիվացման նպատակներով: Այն կարող է օգտագործվել նաև ջերմոցային տնտեսությունների վարման նպատակներով:

4. Հողամասերի սեփականատերերը, օգտագործողները պարտավոր են հողերի խախտման հետ կապված աշխատանքներ կատարելիս իրականացնել բերրի շերտի հանումը, պահպանումն ու օգտագործումը:

5. Բերրի շերտի օգտագործման ժամանակ պետք է բացառվեն բարելավվող տարածքների աղտոտումը վնասատուներով, մարդու, կենդանիների և բույսերի վարակիչ հիվանդությունների հարուցիչներով, մոլախոտերի սերմերով, վտանգավոր քիմիական նյութերով, այդ թվում՝ թունաքիմիկատներով, բույսերի վնասատուների դեմ պայքարի այլ միջոցներով:

6. Բերրի շերտը հանելու, պահեստավորելու և պահպանելու ընթացքում ձեռնարկվում են միջոցներ, որոնք բացառում են դրա որակական հատկանիշների վատթարա-

ցումը: Ձրային և հողմնային հողատարումից զերծ պահելու համար պահեստավորված հողաթմբերը ծածկվում են խոտաբույսերով կամ իրականացվում են այլ միջոցառումներ՝ հողաթմբերի ամրացում, ծածկում և այլն:

7. Բերրի շերտը կարող է հանվել քաղաքաշինական գործունեության իրականացման, օգտակար հանածոների արդյունահանման դեպքերում, ինչպես նաև այն գյուղատնտեսական նշանակության հողամասերից, որոնց հզորությունը կազմում է 1,5 մետր և ավելի:

8. Այն դեպքերում, երբ օգտագործվող հողամասը գյուղատնտեսական շրջանառության վերադարձնել հնարավոր չէ (քաղաքաշինական և այլ շինարարական աշխատանքների դեպքերում), ապա բերրի շերտը տեղափոխվում է այնտեղ, որտեղ հողի բարելավման կամ իրացման անհրաժեշտություն կա:

9. Այն դեպքերում, երբ հողամասը ենթակա է վերականգնման (օգտակար հանածոների արդյունահանում, երկրաբանահետախուզական և այլ ժամանակավոր աշխատանքներ), ապա բերրի շերտը տեղափոխվում և պահպանվում է վերականգնվող հողամասի մոտ, որպես կանոն, գյուղատնտեսության համար ոչ պիտանի հողերի վրա:

10. Այն դեպքերում, երբ բերրի շերտը հանվում է գյուղատնտեսական հողամասերից, որոնց հզորությունը կազմում է 1,5 մետր և ավելի, ապա բերրի շերտի հանելուց հետո հողի հզորությունը չի կարող պակաս լինել քան 1.0 մետրը:

11. Բերրի շերտի պահպանությունն իրականացվում է հողի սեփականատիրոջ կամ օգտագործողի միջոցների հաշվին:

12. Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերից բերրի շերտը հանելու դեպքում բերրի շերտի տեղափոխումն իրականացվում է այն անձի հաշվին, ում կարիքների համար օգտագործվելու է բերրի շերտը, այլ անձանց սեփականությունը հանդիսացող հողամասերից բերրի շերտը հանելու դեպքում բերրի շերտի

տեղափոխման ծախսերի բաշխումն իրականացվում է պայմանագրով սահմանված կարգով:

13. Մեկ հողամասի կամ նույն սեփականատիրոջը պատկանող տարբեր հողամասերի սահմաններում գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու համար հողի բերրի շերտը կարելի է հանել ու տեղափոխել առանց սահմանափակման:

14. Բերրի շերտը հողամասից հողամաս տեղափոխելու համար, դրա նախաձեռնողը, համապատասխան գրավոր համաձայնություն է ստանում հողամասի սեփականատիրոջից, որտեղ նշվում են տեղափոխվող բերրի շերտի ծավալը, տեղափոխելու նպատակն ու ժամկետները: Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերից բերրի շերտի տեղափոխման համաձայնությունը տալիս է համայնքի ղեկավարը, իսկ պետական սեփականության հողամասերից՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան մարզպետը:

15. Եթե հողամասի սեփականատերը հանդիսանում է պետությունը կամ համայնքը, ապա համապատասխան համայնքի ղեկավարը կամ մարզպետը 5 աշխատանքային օրվա ընթացքում պատասխանում է նախաձեռնողին՝ բերրի շերտը հողամասից հողամաս տեղափոխելու համար իր համաձայնության կամ անհամաձայնության մասին: Հինգ աշխատանքային օրվա ընթացքում չպատասխանելու դեպքում համաձայնությունը համարվում է տրված՝ բացառությամբ սույն կարգի 17-րդ կետում նշված հողերի:

16. Բերրի շերտը տեղափոխելու համաձայնությունը չի կարող տրվել այն դեպքում, երբ սեփականատերն ունի՝

1) հողերի յուրացման ծրագիր.

2) վերականգնման (ռեկուլտիվացիայի) ենթակա խախտված հողեր.

3) գյուղատնտեսական նշանակության հող, որի հզորությունը 1,5 մետրից պակաս է.

4) աղտոտված հող՝ վնասատուներով, մարդու, կենդանիների և բույսերի վարակիչ հիվանդությունների հարուցիչներով, մոլախոտերի սերմերով, վտանգավոր քիմիական

նյութերով, այդ թվում՝ թունաքիմիկատներով, բույսերի վնասատուների դեմ պայքարի այլ միջոցներով:

17. Հողամասի սեփականատերը բերրի շերտի տեղափոխման գրավոր համաձայնության մասին գրավոր իրազեկում է Հայաստանի Հանրապետության համապատասխան մարզպետին՝ մինչև տեղափոխման գործընթացն սկսելը՝ նշելով տեղափոխվող բերրի շերտի ծավալը, տեղափոխելու նպատակն ու ժամկետները:

18. Բերրի շերտի հանման, պահպանման, տեղափոխման և օգտագործման մասին տվյալները հաշվառվում ու գրանցվում են Հայաստանի Հանրապետության մարզպետարաններում՝ տարեկան տվյալների հաշվառման համապատասխան մատյանում:

19. Հաշվառման մատյանի բոլոր էջերը համարակալվում են, վերջին էջում կատարվում է նշում էջերի քանակի մասին և կնքվում Հայաստանի Հանրապետության համապատասխան մարզպետի կողմից:

20. Հաշվառման մատյանը պարունակում է բերրի շերտը հողամասից հողամաս տեղափոխելու նպատակով դրա նախաձեռնողի անունը, ազգանունը, հասցեն, սեփականատիրոջ կողմից տրված համաձայնության ամսաթիվը և բերրի շերտի օգտագործման հաշվառման ձևի հերթական համարը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 8-ի N 1396 -Ն որոշման N 2 հավելվածի:

21. Սույն կարգին համապատասխան բերրի շերտը հանելիս՝ դրա տեղափոխման և պահպանման աշխատանքները չիրականացնող հողի սեփականատերը և օգտագործողը պատասխանատվության են ենթարկվում Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2011 թվականի
սեպտեմբերի 8-ի N 1396 - Ն որոշման

Հ Ա Շ Վ Ա Ռ Մ Ա Ն Ձ Ե Վ

ՀՈՂԻ ԲԵՐՐԻ ՇԵՐՏԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ

Մարզը (համայնքը) _____

Հանված հողի բերրի շերտի՝

մակերեսը (քառ. մետր) _____

ծավալը (խոր. մետր) _____

Տեղափոխված բերրի հողի ծավալը (խոր. մետր) _____

Կուտակված (պահպանվող)

բերրի հողի ծավալը (խոր. մետր) _____

Ում է թույլատրվել _____

Թույլտվության ամսաթիվը _____

Մարզպետը _____ _____
(անունը, ազգանունը) (ստորագրությունը)

Կատարողը _____ _____
(անունը, ազգանունը) (ստորագրությունը)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ